ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանի հանդիպման վերաբերյալ

09 ապրիլի 2004թ.

Ս.թ. ապրիլի 9-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) նախագահ Պերճ Սեդրակյանին, որը որպես ՀԲԸՄ նախագահ առաջին անգամն էր այցելում Հայաստան:

Ծավալված զրույցի սկզբում Վ. Օսկանյանը բարձր գնահատեց ազգային այդ կառույցի գործունեությունը եւ առաքելությունը համայն հայության շրջանակներում: Մտքեր փոխանակվելով արդի շրջանում Հայաստան-Սփյուռք համագործակցության հիմնական առանցքների եւ անելիքների շուրջ՝ զրուցակիցները մասնավորապես անդրադարձան Սփյուռքի գաղթօջախներում եւ Հայաստանում ծավալած ՀԲԸՄ ծրագրերին: Այդ կապակցությամբ Պ. Սեդրակյանը, որպես նոր ընտրված նախագահ, ներկայացրեց իր գաղափարները Միության հետագա առաքելության վերաբերյալ:

Հավաստելով ՀԲԸՄ-ն արժեքավոր ավանդը եւ դարավոր փորձը կրթական գործի բնագավառում՝ քննարկվեցին այս ուղղությամբ Միության հետագա անելիքները, որոնց մեջ առանձնակի ուշադրություն դարձվեց Մելգոնյան կրթական հաստատության հետագա ճակատագրի հետ կապված հարցերին: